# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2015 թվականի օգոստոսին

**(վերլուծություն)**

2015 թվականի օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 15022 գործարք, որոնց քանակը 2015 թվականի հուլիս ամսվա համեմատ նվազել է 7.7 %-ով, իսկ 2014 թվականի օգոստոսի համեմատ՝ 14.7 %-ով:

2015 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2015 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2015 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4166 օտարման գործարքի 69.0 %-ը կազմել է առուվաճառքը, 30.6 %-ը՝ նվիրատվությունը և 0.4 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 38.6 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 39.6 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2015 թվականի օգոստոսին, 2015 թվականի հուլիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքները նվազել են 9.6 %-ով, իսկ 2014 թվականի օգոստոսի համեմատ՝ 2.7 %-ով:

2015 թվականի օգոստոսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.3 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2015 թվականի օգոստոսին, 2015 թվականի հուլիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 15.9 %-ով, իսկ 2014 թվականի օգոստոսի համեմատ՝ 16.7 %-ով:

2015 թվականի օգոստոսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | օգոստոս 2014 թ. | օգոստոս 2015 թ. | հուլիս 2015 թ. |
| **Կենտրոն** | 428000 | 428000 | 428000 |
| **Արաբկիր** | 356600 | 356600 | 356600 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 282700 | 282750 | 282700 |
| **Նոր Նորք** | 252500 | 253300 | 253250 |
| **Ավան** | 260200 | 260750 | 260700 |
| **Էրեբունի** | 250900 | 252100 | 252100 |
| **Շենգավիթ** | 256300 | 257250 | 257250 |
| **Դավթաշեն** | 275150 | 276000 | 276000 |
| **Աջափնյակ** | 249600 | 250250 | 250200 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 242300 | 243400 | 243350 |
| **Նուբարաշեն** | 156000 | 156800 | 156800 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի օգոստոսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի հուլիսի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի օգոստոսին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 299 բնակարան, որոնց քանակը, 2015 թվականի հուլիսի համեմատ, նվազել է 14.8 %-ով, իսկ 2014 թվականի օգոստոսի համեմատ՝ 26.0 %-ով:

2015 թվականի օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով,

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | օգոստոս 2014 թ. | օգոստոս 2015 թ. | հուլիս 2015 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 116000 | 116000 | 116000 |
| | Ապարան | 57500 | 57900 | 57800 |
| | Թալին | 65850 | 66250 | 66200 |
| Արարատ | Արտաշատ | 96750 | 97900 | 97900 |
| | Մասիս | 115700 | 115800 | 115800 |
| | Վեդի | 100700 | 101450 | 101450 |
| | Արարատ | 75400 | 76800 | 76800 |
| Արմավիր | Վաղարշապատ | 154150 | 154100 | 154100 |
| | Արմավիր | 121200 | 121200 | 121200 |
| | Մեծամոր | 87500 | 87550 | 87550 |
| Գեղարքունիք | Սևան | 99200 | 99400 | 99400 |
| | Գավառ | 59800 | 60200 | 60100 |
| | Մարտունի | 107650 | 107700 | 107700 |
| | Վարդենիս | 44800 | 44850 | 44850 |
| | Ճամբարակ | 28700 | 28700 | 28700 |
| Լոռի | Վանաձոր | 88400 | 88500 | 88500 |
| | Ստեփանավան | 74500 | 74600 | 74600 |
| | Սպիտակ | 99800 | 99800 | 99800 |
| | Ալավերդի | 55000 | 55300 | 55300 |
| | Տաշիր | 47300 | 47350 | 47350 |
| | Թումանյան | 11000 | 11000 | 11000 |
| | Շամլուղ | 8000 | 8000 | 8000 |
| | Ախթալա | 20200 | 20500 | 20500 |
| Կոտայք | Աբովյան | 155100 | 155100 | 155100 |
| | Նոր Հաճն | 128600 | 128550 | 128550 |
| | Բյուրեղավան | 108150 | 108200 | 108200 |
| | Եղվարդ | 109400 | 109400 | 109400 |
| | Հրազդան | 63800 | 63800 | 63800 |
| | Ծաղկաձոր | 292500 | 292400 | 292400 |
| | Չարենցավան | 85500 | 85500 | 85500 |
| Շիրակ | Գյումրի | 109300 | 109250 | 109250 |
| | Արթիկ | 66700 | 66800 | 66800 |
| | Մարալիկ | 40700 | 40800 | 40800 |
| Սյունիք | Գորիս | 122300 | 123000 | 122950 |
| | Կապան | 93000 | 94100 | 94100 |
| | Սիսիան | 91150 | 92000 | 91950 |
| | Մեղրի | 80900 | 82200 | 82050 |
| | Ագարակ | 46900 | 47300 | 47300 |
| | Քաջարան | 94650 | 94650 | 94600 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 | 8000 |
| Վայոց ձոր | Վայք | 95000 | 95000 | 95000 |
| | Եղեգնաձոր | 125500 | 125600 | 125600 |
| | Ջերմուկ | 112900 | 112950 | 112950 |
| Տավուշ | Դիլիջան | 113150 | 114050 | 114000 |
| | Իջևան | 118300 | 118400 | 118400 |
| | Բերդ | 60200 | 60300 | 60300 |
| | Նոյեմբերյան | 49900 | 50150 | 50150 |
| | Այրում | 31850 | 31850 | 31850 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի հուլիսի համեմատ աճել են 0.1%-ով:

2015 թվականի օգոստոսին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 339 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 96 գործարք, մարզերում՝ 243 գործարք: 2015 թվականի օգոստոսին, 2015 թվականի հուլիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 17.3 %-ով, ընդ որում, Երևանում՝ 21.3 %-ով, իսկ մարզերում՝ 15.6 %-ով: 2015 թվականի օգոստոսին 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 15.9 %-ով, ընդ որում, Երևանում՝ 16.5 %-ով, իսկ մարզերում՝ 15.6 %-ով:

2015 թվականի օգոստոսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | օգոստոս 2014 թ. | օգոստոս 2015 թ. | հուլիս 2015 թ. |
| **Կենտրոն** | 476100 | 476100 | 476100 |
| **Արաբկիր** | 383000 | 383000 | 383000 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 295000 | 295000 | 295000 |
| **Նորք-Մարաշ** | 319200 | 319200 | 319200 |
| **Ավան** | 270500 | 270500 | 270500 |
| **Էրեբունի** | 239750 | 239750 | 239750 |
| **Շենգավիթ** | 255000 | 255000 | 255000 |
| **Դավթաշեն** | 276000 | 276000 | 276000 |
| **Աջափնյակ** | 250050 | 250050 | 250050 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 238000 | 238000 | 238000 |
| **Նուբարաշեն** | 150800 | 150800 | 150800 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի օգոստոսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի հուլիսի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | օգոստոս 2014 թ. | օգոստոս 2015 թ. | հուլիս 2015 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 136200 | 136200 | 136200 |
| | Ապարան | 60050 | 60050 | 60050 |
| | Թալին | 69250 | 69250 | 69250 |
| Արարատ | Արտաշատ | 100000 | 100000 | 100000 |
| | Մասիս | 115100 | 115100 | 115100 |
| | Վեդի | 102300 | 102300 | 102300 |
| | Արարատ | 88000 | 88000 | 88000 |
| Արմավիր | Վաղարշապատ | 153100 | 153100 | 153100 |
| | Արմավիր | 107000 | 107000 | 107000 |
| Գեղարքունիք | Սևան | 94800 | 94800 | 94800 |
| | Գավառ | 57100 | 57100 | 57100 |
| | Մարտունի | 96100 | 96100 | 96100 |
| | Վարդենիս | 41000 | 41000 | 41000 |
| | Ճամբարակ | 31100 | 31100 | 31100 |
| Լոռի | Վանաձոր | 100000 | 100500 | 100500 |
| | Ստեփանավան | 90000 | 91000 | 91000 |
| | Սպիտակ | 114000 | 114000 | 114000 |
| | Ալավերդի | 50200 | 50200 | 50200 |
| | Տաշիր | 51900 | 51900 | 51900 |
| | Թումանյան | 12000 | 12000 | 12000 |
| | Շամլուղ | 14000 | 14000 | 14000 |
| | Ախթալա | 30000 | 30000 | 30000 |
| Կոտայք | Աբովյան | 157000 | 157100 | 157100 |
| | Նոր Հաճն | 129800 | 129800 | 129800 |
| | Բյուրեղավան | 120500 | 120500 | 120500 |
| | Եղվարդ | 116100 | 116100 | 116100 |
| | Հրազդան | 82600 | 82600 | 82600 |
| | Ծաղկաձոր | 305000 | 305000 | 305000 |
| | Չարենցավան | 83000 | 83000 | 83000 |
| Շիրակ | Գյումրի | 118500 | 119000 | 119000 |
| | Արթիկ | 63100 | 63100 | 63100 |
| | Մարալիկ | 52000 | 52000 | 52000 |
| Սյունիք | Գորիս | 130000 | 130000 | 130000 |
| | Կապան | 100000 | 100500 | 100500 |
| | Սիսիան | 96500 | 96500 | 96500 |
| | Մեղրի | 84500 | 84500 | 84500 |
| | Ագարակ | 46900 | 46900 | 46900 |
| | Դաստակերտ | 11610 | 11610 | 11610 |
| Վայոց ձոր | Վայք | 90050 | 90050 | 90050 |
| | Եղեգնաձոր | 116600 | 116600 | 116600 |
| | Ջերմուկ | 131300 | 131300 | 131300 |
| Տավուշ | Դիլիջան | 113000 | 115000 | 115000 |
| | Իջևան | 123200 | 123200 | 123200 |
| | Բերդ | 60100 | 60100 | 60100 |
| | Նոյեմբերյան | 48300 | 48300 | 48300 |
| | Այրում | 36250 | 36250 | 36250 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

անհատական բնակելի տների շինության 1 $մ^2$ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի հուլիսի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի օգոստոսին հանրապետությունում օտարվել է 1385 միավոր (768.38 հա) հող, որից Երևանում՝ 78 միավոր (4.93 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 828 միավոր (721.24 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.25 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 402 միավոր (37.82 հա), որից Երևանում՝ 37 միավոր (2.01 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 130 միավոր (6.77 հա), որից Երևանում՝ 38 միավոր (2.64 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 17 միավոր (2.12 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.03 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 4 միավոր (0.30 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 2 միավոր (0.05 հա),
- ջրային հող՝ 2 միավոր (0.08 հա) ընդհանուր մակերեսով:

2015 թվականի օգոստոսին հանրապետությունում օտարված հողերից 1124 միավորի (685.59 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 63 միավոր (4.35 հա), նվիրատվության գործարք՝ 252 միավորի (81.71 հա), որից Երևանում՝ 15 միավոր (0.58 հա) և փոխանակության գործարք՝ 9 միավորի (1.08 հա):

Հանրապետությունում 2015 թվականի օգոստոսին, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 16.2 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 51.3 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 13.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 27.3 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Լոռու մարզում՝ 187.56 հա, որից 185.56 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 20.0 %-ը կամ 225 միավորը (121.90 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 25 միավոր (0.79 հա), իսկ 78.9 %-ը կամ 887 միավորը (563.44 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 38 միավոր (3.57 հա): 2015 թվականի օգոստոսին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 12 գործարք (0.25 հա):

Ստորև ներկայացված է 2015 թվականի օգոստոսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապատ. հողեր | | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապատ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 0 | 0.00 | 0 | 0.00 | 7 | 0.14 | 18 | 0.64 | 2 | 0.25 | 1 | 0.03 | 20 | 1.47 | 15 | 1.82 |
| Արագածոտն | 9 | 6.46 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 0.01 | 42 | 62.76 | 0 | 0.00 | 26 | 3.18 | 0 | 0.00 |
| Արարատ | 21 | 46.12 | 6 | 0.16 | 7 | 0.43 | 4 | 0.06 | 81 | 56.78 | 0 | 0.00 | 38 | 4.63 | 4 | 0.34 |
| Արմավիր | 8 | 9.56 | 1 | 0.02 | 3 | 0.03 | 0 | 0.00 | 63 | 113.71 | 0 | 0.00 | 46 | 4.71 | 0 | 0.00 |
| Գեղարքունիք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 13 | 0.92 | 15 | 0.27 | 60 | 18.73 | 1 | 0.96 | 14 | 1.66 | 4 | 0.24 |
| Լոռի | 5 | 15.86 | 0 | 0.00 | 13 | 0.31 | 9 | 0.50 | 200 | 169.70 | 0 | 0.00 | 10 | 1.15 | 4 | 0.04 |
| Կոտայք | 10 | 5.61 | 2 | 0.21 | 14 | 0.65 | 8 | 0.32 | 77 | 42.64 | 0 | 0.00 | 63 | 6.32 | 3 | 0.10 |
| Շիրակ | 4 | 4.54 | 2 | 0.45 | 5 | 0.13 | 2 | 0.22 | 48 | 52.43 | 0 | 0.00 | 8 | 1.26 | 1 | 0.02 |
| Սյունիք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.04 | 0 | 0.00 | 11 | 8.11 | 0 | 0.00 | 4 | 0.62 | 0 | 0.00 |
| Վայոց ձոր | 12 | 26.53 | 0 | 0.00 | 1 | 0.02 | 0 | 0.00 | 17 | 7.23 | 0 | 0.00 | 1 | 0.12 | 1 | 0.01 |
| Տավուշ | 1 | 0.30 | 3 | 0.22 | 3 | 0.38 | 12 | 0.66 | 7 | 1.40 | 0 | 0.00 | 12 | 0.92 | 2 | 0.02 |
| Ընդամենը | 70 | 114.98 | 14 | 1.06 | 67 | 3.05 | 71 | 2.68 | 608 | 533.74 | 2 | 0.99 | 242 | 26.04 | 34 | 2.59 |

Ստորև ներկայացված է 2015 թվականի օգոստոսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Վաճառք աճուրդով | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապ. հողեր | | | | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 17 | 0.40 | 0 | 0.00 | 6 | 0.12 | 11 | 0.28 | 8 | 0.38 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.02 | 7 | 0.36 |
| Արագածոտն | 2 | 0.003 | 1 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.003 | 8 | 6.31 | 7 | 6.30 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.01 |
| Արարատ | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 38 | 46.77 | 21 | 46.12 | 6 | 0.16 | 7 | 0.43 | 4 | 0.06 |
| Արմավիր | 2 | 0.01 | 0 | 0.00 | 2 | 0.01 | 0 | 0.00 | 10 | 9.59 | 8 | 9.56 | 1 | 0.02 | 1 | 0.01 | 0 | 0.00 |
| Գեղարքունիք | 1 | 0.003 | 0 | 0.00 | 1 | 0.003 | 0 | 0.00 | 27 | 1.19 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 12 | 0.92 | 15 | 0.27 |
| Լոռի | 6 | 0.13 | 0 | 0.00 | 1 | 0.01 | 5 | 0.12 | 21 | 16.55 | 5 | 15.86 | 0 | 0.00 | 12 | 0.31 | 4 | 0.38 |
| Կոտայք | 2 | 0.08 | 0 | 0.00 | 2 | 0.08 | 0 | 0.00 | 32 | 6.71 | 10 | 5.61 | 2 | 0.21 | 12 | 0.57 | 8 | 0.32 |
| Շիրակ | 2 | 0.03 | 0 | 0.00 | 2 | 0.03 | 0 | 0.00 | 11 | 5.31 | 4 | 4.54 | 2 | 0.45 | 3 | 0.10 | 2 | 0.22 |
| Սյունիք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.04 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.04 | 0 | 0.00 |
| Վայոց ձոր | 1 | 0.02 | 0 | 0.00 | 1 | 0.02 | 0 | 0.00 | 12 | 26.53 | 12 | 26.53 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 |
| Տավուշ | 2 | 0.11 | 2 | 0.11 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 17 | 1.45 | 1 | 0.30 | 1 | 0.11 | 3 | 0.38 | 12 | 0.66 |
| Ընդամենը | **35** | **0.79** | **3** | **0.11** | **15** | **0.27** | **18** | **0.40** | **185** | **120.83** | **68** | **114.82** | **12** | **0.95** | **52** | **2.78** | **53** | **2.28** |

2015 թվականի օգոստոսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 2 գործարք (0.16 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2015 թվականի օգոստոսին, 2014 թվականի օգոստոսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 17.0 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 33.3 %-ով, իսկ մարզերում՝ 16.1 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 4.2 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 41.6 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 1.9 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 33.3 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի օգոստոսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (հա) | պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (հա) | շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին |
| **Արագածոտնի մարզ** | | | | | | | | | | |
| Աշտարակ | 3 | 5.14 | 65.9 | 81.3 | 73.8 | 23 | 11.60 | 365.0 | 12000.0 | 3772.5 |
| Ապարան | 3 | 0.36 | 14.6 | 510.0 | 346.7 | | | 86.5 | 2727.3 | 650.3 |
| Թալին | 1 | 0.80 | 41.5 | 41.5 | 41.5 | 7 | 41.50 | 93.6 | 5494.5 | 810.0 |
| Ծաղկահովիտ | | | | | | 3 | 6.34 | 79.5 | 1000.0 | 352.5 |
| **Արարատի մարզ** | | | | | | | | | | |
| Արտաշատ | 16 | 41.80 | 68.5 | 933.3 | 310.0 | 31 | 21.52 | 335.1 | 10833.3 | 2617.3 |
| Մասիս | 4 | 4.26 | 83.3 | 1384.0 | 421.6 | 12 | 13.75 | 200.0 | 11904.8 | 3134.6 |
| Վեդի | 1 | 0.06 | 5031.3 | 5031.3 | 5031.3 | 29 | 14.76 | 207.0 | 10795.1 | 1867.0 |
| **Արմավիրի մարզ** | | | | | | | | | | |
| Արմավիր | 4 | 6.70 | 73.5 | 1061.8 | 463.9 | 25 | 18.86 | 294.3 | 9090.0 | 1261.0 |
| Բաղրամյան | | | | | | 6 | 16.52 | 90.6 | 2561.1 | 915.0 |
| Վաղարշապատ | 4 | 2.86 | 69.0 | 1676.8 | 582.3 | 26 | 30.04 | 444.4 | 11764.7 | 1993.2 |
| **Գեղարքունիքի մարզ** | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 15 | 0.36 | 199.8 | 1875.0 | 470.0 |
| Ճամբարակ | | | | | | | | 60.5 | 953.3 | 352.0 |
| Մարտունի | | | | | | 27 | 2.40 | 51.1 | 2850.0 | 819.0 |
| Սևան | | | | | | 5 | 1.90 | 52.2 | 2134.8 | 352.2 |
| Վարդենիս | | | | | | 10 | 13.59 | 41.2 | 2575.1 | 430.0 |
| **Լոռու մարզ** | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 14 | 5.66 | 170.4 | 6424.2 | 590.0 |
| Գուգարք | 2 | 0.21 | 748.0 | 748.3 | 748.1 | 2 | 0.79 | 234.6 | 6065.9 | 800.0 |
| Սպիտակ | | | | | | | | 250.0 | 5555.5 | 690.0 |
| Ստեփանավան | 2 | 15.47 | 290.5 | 1274.3 | 782.4 | 5 | 6.46 | 90.6 | 1686.6 | 400.0 |
| Տաշիր | 1 | 0.18 | 1487.9 | 1487.9 | 1487.9 | 179 | 156.79 | 45.3 | 1384.4 | 180.0 |
| **Կոտայքի մարզ** | | | | | | | | | | |
| Աբովյան | 3 | 1.17 | 897.9 | 4532.6 | 2383.8 | 31 | 19.77 | 279.3 | 11942.7 | 3980.5 |
| Եղվարդ | 6 | 4.23 | 36.6 | 388.1 | 187.9 | 34 | 14.90 | 174.4 | 11971.8 | 2496.4 |
| Հրազդան | 1 | 0.20 | 207.5 | 207.5 | 207.5 | 9 | 7.18 | 130.5 | 10256.4 | 1120.0 |
| **Շիրակի մարզ** | | | | | | | | | | |
| Ախուրյան | 1 | 0.94 | 115.5 | 115.5 | 115.5 | 17 | 17.65 | 252.0 | 1693.1 | 636.0 |
| Ամասիա | | | | | | 1 | 1.31 | 40.9 | 261.0 | 132.5 |
| Անի | 3 | 3.60 | 78.4 | 117.5 | 102.6 | 5 | 5.63 | 110.6 | 546.9 | 456.2 |
| Աշոցք | | | | | | 8 | 11.03 | 58.5 | 215.8 | 138.5 |
| Արթիկ | | | | | | 17 | 16.81 | 79.4 | 1428.6 | 503.5 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 1 | 0.14 | 92.6 | 1023.2 | 800.0 |
| Կապան | | | | | | 2 | 1.25 | 120.0 | 841.6 | 400.0 |
| Մեղրի | | | | | | 3 | 0.41 | 193.0 | 3000.0 | 755.5 |
| Սիսիան | | | | | | 5 | 6.31 | 46.3 | 1977.4 | 612.0 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 2 | 0.67 | 125.0 | 10000.0 | 1825.0 |
| Վայք | 12 | 26.53 | 44.7 | 109.2 | 89.5 | 15 | 6.56 | 58.8 | 1430.7 | 580.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 1 | 0.11 | 213.3 | 3783.8 | 670.0 |
| Իջևան | 1 | 0.30 | 1100.0 | 1100.0 | 1100.0 | 6 | 1.29 | 267.5 | 9454.5 | 1435.5 |
| Նոյեմբերյան | | | | | | | | 46.7 | 7368.4 | 985.0 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի օգոստոսին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ$^2$ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (մ$^2$) | պայմանագրային գները 1000.0 մ$^2$ մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (մ$^2$) | շուկայական գները 1000.0 մ$^2$ մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | | | | | | 20 | 20415.8 | 130.7 | 22200.0 | 2586.7 |
| Ապարան | | | | | | 2 | 4790.0 | 124.1 | 609.6 | 390.3 |
| Թալին | | | | | | 2 | 2591.0 | 63.2 | 1454.8 | 152.6 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 60.0 | 214.3 | 93.0 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 3 | 2158.2 | 375.3 | 545.4 | 435.5 | 12 | 26485.8 | 173.9 | 7140.3 | 905.5 |
| Մասիս | 1 | 518.5 | 869.8 | 869.8 | 869.8 | 18 | 11368.1 | 187.5 | 25000.0 | 1209.0 |
| Վեդի | 3 | 1670.0 | 356.3 | 2000.0 | 1232.1 | 8 | 8430.0 | 126.1 | 5000.0 | 663.7 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 1 | 60.0 | 359.1 | 359.1 | 359.1 | 20 | 19959.0 | 131.6 | 9090.9 | 1215.0 |
| Բաղրամյան | | | | | | | | 100.0 | 833.3 | 240.0 |
| Վաղարշապատ | | | | | | 23 | 23342.0 | 197.4 | 26528.4 | 1532.0 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 3 | 4172.0 | 186.6 | 1084.3 | 683.7 |
| Ճամբարակ | | | | | | | | 71.3 | 2286.2 | 146.8 |
| Մարտունի | 2 | 1416.0 | 165.0 | 165.3 | 165.1 | 9 | 11613.0 | 119.3 | 5000.0 | 280.3 |
| Սևան | | | | | | 1 | 800.0 | 240.0 | 3110.4 | 338.0 |
| Վարդենիս | 10 | 7794.5 | 266.4 | 600.0 | 366.5 | 1 | 7.1 | 72.5 | 987.2 | 150.2 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 7 | 130.9 | 1150.0 | 2700.0 | 1455.8 | | | 114.3 | 1388.9 | 216.8 |
| Գուգարք | 3 | 1484.3 | 105.8 | 1320.0 | 908.6 | 5 | 6093.0 | 77.9 | 14083.3 | 1260.4 |
| Սպիտակ | 2 | 1442.2 | 216.0 | 245.0 | 230.5 | 3 | 2900.0 | 104.9 | 1348.3 | 205.0 |
| Ստեփանավան | | | | | | 2 | 2457.0 | 88.2 | 1666.7 | 175.5 |
| Տաշիր | | | | | | | | 45.3 | 400.0 | 90.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 11 | 4877.0 | 355.0 | 5201.8 | 3381.7 | 41 | 38484.6 | 264.5 | 35353.5 | 1979.1 |
| Եղվարդ | 1 | 800.0 | 2263.8 | 2263.8 | 2263.8 | 15 | 17466.0 | 173.6 | 27000.0 | 2861.0 |
| Հրազդան | | | | | | 5 | 4509.9 | 117.7 | 34848.5 | 1315.7 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 1 | 210.0 | 5000.0 | 5000.0 | 5000.0 | 6 | 8638.3 | 113.6 | 18750.0 | 336.6 |
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 274.7 | 72.0 |
| Անի | 1 | 810.7 | 244.2 | 244.2 | 244.2 | | | 67.9 | 180.6 | 196.0 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 65.0 |
| Արթիկ | 1 | 24.0 | 2750.0 | 2750.0 | 2750.0 | 2 | 3985.7 | 111.8 | 5000.0 | 219.0 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 2 | 2710.0 | 112.2 | 1700.0 | 365.6 |
| Կապան | | | | | | 1 | 2238.0 | 67.9 | 2638.9 | 345.0 |
| Մեղրի | | | | | | | | 68.5 | 632.9 | 253.5 |
| Սիսիան | 1 | 378.0 | 607.2 | 607.2 | 607.2 | 1 | 1250.0 | 123.5 | 875.0 | 240.0 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 1 | 1170.0 | 96.7 | 7659.6 | 509.0 |
| Վայք | | | | | | | | 120.7 | 1448.3 | 250.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | | | 75.8 | 810.0 | 125.3 |
| Իջևան | 2 | 2967.8 | 52.3 | 245.9 | 149.1 | 11 | 8091.4 | 74.1 | 14423.1 | 519.2 |
| Նոյեմբերյան | 1 | 845.9 | 100.8 | 100.8 | 100.8 | 1 | 1060.0 | 125.0 | 1948.1 | 248.0 |

2015 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 523 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.5 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 55.1 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2015 թվականի օգոստոսին, 2015 թվականի հուլիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 15.5 %-ով, իսկ 2014 թվականի օգոստոսի համեմատ՝ 21.4 %-ով:

2015 թվականի օգոստոսին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 16 բնակարանի, 52 անհատական բնակելի տան, 222 հասարակական և 46 արտադրական նշանակության օբյեկտի, 182 հողի և 5 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2015 թվականի օգոստոսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 5 վարձակալության գործարքի քանակը 2015 թվականի հուլիսի համեմատ նվազել է 28.6 %-ով, իսկ 2014 թվականի օգոստոսի համեմատ՝ մնացել է անփոփոխ: 2015 թվականի օգոստոսին հանրապետությունում վարձակալված 297.39 հա հողից 1.84 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 295.55 հա հողից 1.54 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 0.06 հա արդյունաբերական օբյեկտի, 0.001 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Լոռու մարզում՝ 119.05 հա, որից 118.83 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1322 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 8.8 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2015 թվականի հուլիսի համեմատ, նվազել է 25.5 %-ով, իսկ 2014 թվականի օգոստոսի համեմատ՝ 30.8 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (53.5 %), անհատական բնակելի տների (21.2 %), հասարակական նշանակության օբյեկտների (11.2 %) և հողերի (7.6 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 736 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2015 թվականի հուլիսի համեմատ նվազել է 25.9 %-ով, իսկ 2014 թվականի օգոստոսի համեմատ՝ 28.5 %-ով:

2015 թվականի օգոստոսին հանրապետությունում գրավադրվել է 103.22 հա հող, որից 4.17 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 93.2 %-ը կամ 96.21 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արմավիրի մարզում՝ 57.12 հա, որից 56.84 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի օգոստոսին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 118 գործարք: 2015 թվականի օգոստոսին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի հուլիսի համեմատ, նվազել է 28.9 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 10.6 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 84 գործարք, որը 2015 թվականի հուլիսի համեմատ նվազել է 20.8 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 2.4 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի հուլիսի համեմատ նվազել է 43.3 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 32.0 % -ով:

2015 թվականի օգոստոսին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1551 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2015 թվականի հուլիսի համեմատ, նվազել է 13.9 %-ով, իսկ 2014 թվականի օգոստոսի համեմատ՝ 14.6 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 10.3 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կոտայքի մարզում (18.8 %):

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**